ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ ‹‹Երևանի Նաիրի Զարյանի անվան հ130 հիմնական դպրոց››ՊՈԱԿ-ի ‹‹Ֆիզկուլտուրա›› /71 դասաժամ/,‹‹Ֆիզիկա›› /8 դասաժամ/, ‹‹Հայոց եկեղեցու պատմություն›› /8 դասաժամ/, ‹‹Մայրենի›› /դասվար/ /7 դասաժամ/, ‹‹Տեխնոլոգիա›› /15դասաժամ/, ‹‹Կերպարվեստ›› /10 դասաժամ/, ‹‹Հասարակագիտություն›› /14 դասաժամ/, ‹‹Անգլերեն›› /18 դասաժամ/, ‹‹Ռուսաց լեզու›› /8 դասաժամ/, ‹‹Ինֆորմատիկա›› /15 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (ձև 1) մեկ լուսանկար 3X4 չափի
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
-անձը հաստատող փաստաթուղթ
-‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
-ինքնակենսագրություն (Ձև 5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 7-ին ժամը 14:30-ին, Երևանի Նաիրի Զարյանի անվան հ 130 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան նրբ.3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 22-23-00 հեռախոսահամարով: